ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 13-ին, Վարդանանց զորավարաց 1.036 վկայից ազգային և կրոնական տոնի օրը, հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։

Սուրբ պատարագից հետո վանքի միաբանությունը այցելելով առանձին-առանձին շնորհավորեց այն միաբաններին, որոնց տոնն էր այդ օրը, իսկ երեկոյան հավաքվելով մի ընդհանուր սեղանի շուրջը, եղբայրական ուրախ ու ջերմ մթնոլորտում նշեցին կրոնական-ազգային այդ կարևոր տոնը։ Մյուս օրը, փետրվարի 13-ին, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ և կատարվեց հոգեհանգիստ մեռելոց հիշատակին։

***

Փետրվարի 13-ի երեկոյան աննման խորհրդավորությամբ կատարվեց Տյառնընդառաջի տոնակատարության կապակցությամբ նախատոնակ։ Մայր Տաճարում շարժվելու հնարավորություն չկար։ Միաբանությունը, զգեստավորված, վառվող մոմերը ձեռքներին, բոլորել էին Ս. Իջման սեղանը, խնկի ծուխը մշուշապատել էր Տաճարը, տեղի էր ունենում հանդիսավոր արարողությունը, իսկ օդում լսելի էին հավատացյալների աղոթքի մրմունջները։

Երեկոյան ժամերգությունը վերջանալուց հետո հավատացյալները խումբ-խումբ դուրս են գալիս վառված մոմերը ձեռքներին։ Տաճարը դատարկվում է, իսկ հետո, այստեղ այնտեղ, խարույկներ են երևում։ Ժողովուրդը հազարամյակներ հետո դեռ չի մոռացել անհիշելի ժամանակներից ժառանգած իր ծիսական հնամենի, հեթանոս, բայց արդեն քրիստոնեացած նվիրական ավանդությունները։

Հաջորդ օրը հանդիսավոր պատարագ է մատուցվում Ավագ սեղանի վրա։

***

Փետրվարի 22-ին, կիրակի օրը, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում հանդիսավոր սուրբ պատարագի ընթացքում, բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ կատարվեց նորոգ հանգուցյալ արժանապատիվ Տ. Վարդան քահանա Վարդերեսյանի վերջին օծումը և հոգեհանգիստը։ Վերջին օծման արարողությունը, Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ, կատարեց Մայր Տաճարի միաբանությունից ուղարկված գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։

Սրբազանը մի սրտառուչ քարոզով վեր հանեց հանգուցյալ արժանապատիվ հոր առաքինի վարքն ու բարեմասնությունները, մխիթարեց հանգուցյալի հարազատներին հոգեսփոփիչ խոսքերով։ Այնուհետև Վեհափառ Հայրապետի թույլտվությամբ հանգուցյալի մարմինը տեղափոխվեց Էջմիածին և միաբանության ուղեկցությամբ, հանդիսավոր հոգեհանգստից հետո, ամփոփվեց Մայր Աթոռի միաբանության գերեզմանատանը՝ Ս. Գայանեի վանքի հյուսիսակողմը։ Խոսվեցին հուզիչ դամբանականներ։

***

Մարտի 1-ին, Հայկական ՍՍՌ աշխատավորների դեպուտատների տեղական Սովետների ընտրությունների օրը, Ս. Էջմիածնի միաբանությունը, կատարելով իր քաղաքացիական սրբազան պարտքը, մասնակցեց ընտրություններին։

***

Ապրիլի 11-ին, շաբաթ օրը, Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ, ձեռնադրության խորհուրդ կատարելու համար։ Պատարագի ընթացքում, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը Մայր Աթոռի դպրապետ տիրացու Հակոբ Հակոբյանին ձեռնադրեց ավագ սարկավագ։ Միևնույն օրը սարկավագության աստիճան ստացավ Կիրովաբադի (Բաքվի թեմ) համար քահանայության պատրաստվող, բարձրագույն կրթության տեր Ռաֆայել Խաչատրյանը։

Ձեռնադրության խորհրդին ներկա էին ողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, դասախոսները և հավատացյալ ժողովրդի հոծ բազմությունը։

***

Ապրիլի 12-ին, Նոր Կիրակի (Կրկնազատիկ), Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ, նախորդ օրը սարկավագության աստիճան ստացած շնորհունակ Ռաֆայել Խաչատրյանը ձեռնադրվեց քահանա՝ վերանվանվելով Գարեգին։

Միևնույն օրը, սուրբ պատարագից հետո, ամբողջ միաբանության մասնակցությամբ կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ Հայրենական Մեծ պատերազմի բյուրավոր նահատակաց։

***

Ապրիլի 19-ին, Աշխարհամատրան (Կանաչ կիրակի) տոնի օրը Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Կոստանդին աբեղա Թառլանյանը։ Տաճարի ներսն ու բակը լիքն էին ուխտավորների խուռն բազմությամբ։ Երգում էր քառաձայն երգեցիկ խումբը։